

Մեկնեալ ի սիրելեաց եւ ոչ ոք օգնական,
 Ոչ քոյր եւ ոչ եղբայր 'ւ ոչ գութ մայրական,
 Ոչ հայր որ հարցանէ թէ որդի սիրական,
 20 Ոչ ազգ, ոչ ազնիք 'ւ ոչ ասպնջական:

Երբեմն թէ լինի ոմանց խրրախճան,
 Զղբրիպն մեծարեն ի յիւրեանց սեղան,
 Յանկարծակի յիշէ զանցեալն եւ զներկայն,
 Գառնայ իւր արտասուքն ի գոյն յորդ արեան,

35 Լալով նայի ի յաջ զե շէն իւր նման;
 Նայի ի ձախ եւ լայ գաւուրքն որ անցան.
 Հայի որ ամէն մարդ յուրախութիւն կան,
 Եւ վայ կարգայ իւրեան անձին յատկական:

Քննողն երիկամանց Աստուած պիտական
 80 Քննեալ փորձիւ գիտես զգործս որդւոց մարդկան.
 Եթե զաշխարհս ամէնըն զարիպին տանըն,
 Նըմայ խոտան թուի, անարգ 'ւ անպիտան:

Ի սրտէն հառաջէ նա մորմնքական,
 Ողորմուկ ձայն ածէ ըզօրն ի լման.
 35 Ասէ զինչ կայ ի հոս ակունք պատուական
 Թէ ինձ տան սեփական նա գուժ է եւ գան.

Սիրոյ թէ պատահի ողորմելին այն,
 Կու երկրորդի նորա տրտմութեան զուսան,
 Զի ոչ կարէ զձածուկն ասել յանդիման
 40

17. յօր. իլեց: — 18. քուր: — 22. յուրեանց:
 — 24. ի գունն: — 29. երիկամաց: — 30. որդոց: —
 33. յօր. անբու գրամտ է ի սրտէն, ի խորոցսն ի նե-
 իր սրտէն: — 35. կա: պատուական: — 36. սեփհա-
 կան: — 37. սիրո: